ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/65

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 17.08.2021թ.)

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Տ. Ջիլավյանի (լիազորագիր՝ տրված 17.08.2021թ.),

քննելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 12.08.2021թ. ներկայացված և 13.08.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/65 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 20.01.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Վեճի առարկան.

1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել էր ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71 ծածկագրով գնման ընթացակարգ եւ հայտերի բացումը պետք է տեղի ունենար 30.07.2021թ ժամը 12:00-ին, սակայն հայտերը բացվել են 02.08.2021թ ժամը 12:00-ին:

1.2 Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 14 եւ 15-րդ չափաբաժիններով մասնակցության հայտ է ներկայացրել «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն):

1.3 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 02.08.2021թ թիվ 2 արձանագրությամբ որոշել է, որ մասնակիցների հայտերի ծրարները կազմված են հրավերով սահմանված կարգին համապատասխան եւ մասնակիցների կողմից առաջարկած գները ներկայացված են արձանագրությանը կից հավելվածով: Հայտերում հրավերով պահանջված բոլոր փաստաթղթերը առկա են և համապատասխանում են հրավերի պահանջներին, բացառությամբ «Նատալի ֆարմ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի, որի կապակցությամբ հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, մինչեւ 03.08.2021թ. ժամը 12:00, և մինչ նիստի կասեցման ժամկետի ավարտը մասնակցին տալ անհամապատասխանությունները շտկելու համար օրենքով սահմանված ժամկետ և հնարավորություն:

1.4 Հանձնաժողովը 03.08.2021թ թիվ 3 արձանագրությամբ որոշել է՝ հաշվի առնելով այն, որ գնումը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պայմանների կիրառմամբ, ուստի հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել եւ բավարար գնահատված բոլոր մասնակիցներին օրենքով սահմանված կարգով հրավիրել բանակցությունների գնային առաջարկների նվազեցման շուրջ, որը տեղի կունենա 06.08.2021թ ժամը՝ 11:00-ին: Բանակցությունների վարման կարգը և ժամկետները կսահմանվեն նիստին:

1.5 Հանձնաժողովը 05.08.2021թ թիվ 4 արձանագրության 1-ին, 3-6-րդ կետերով որոշել է.

1. Ընդունել ի գիտություն, որ բանակցությունների նիստին ոչ մի մասնակից չէր ներկայացել և նոր գնային առաջարկ էլ. փոստով չի ներկայացվել:

3. Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները որոշեց. ընթացակարգի 1, 13 և 14 չափաբաժինների հանդեպ կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմանները:

4. Հիմք ընդունելով գնային առաջարկները, հանձնաժողովը որոշեց մերժել.

«Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնով՝ գնային առաջարկերը նախահաշվային գներին գերազանցելու հիմնավորմամբ:

5. Հիմք ընդունելով գնային առաջարկները, հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին, 14 եւ 15-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել «Մեգիէլ» ՍՊԸ-ին:

6. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 2-6, 8-10, 17-20, 22-33, 37-39-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի:

2.*Բողոքի փաստական եւ իրավական հիմքերը.*

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձեւավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ 1) հաստատում է հայտարարության եւ հրավերի տեքստերը, 2) փոփոխություններ է կատարում հրավերում, 3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ, 4) բացում և գնահատում է հայտերը, 5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Նույն հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայան՝ գնահատող հանձնաժողովն ունի քարտուղար, որը նշանակվում է հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Քարտուղարը հանձնաժողովի անդամ չէ: Քարտուղարը՝ պատասխանատվություն է կրում հանձնաժողովի գործունեության՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանության համար:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու՝ Կարգ) 5-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր գնման գործընթացի համար պատասխանատու են պատվիրատուի ղեկավարը, ինչպես նաև իրենց վերապահված իրավասությունների

մասով՝ 1) գնումները համակարգողը, 2) պատասխանատու ստորաբաժանումը, 3) գնահատող հանձնաժողովը:

Կարգի 14-րդ կետի 1-ին, 4-6 ենթակետերի համաձայն՝ 1) հաստատում է գնումների կամ նախաորակավորման հայտարարության եւ հրավերի տեքստերը՝ բացառությամբ փակ պարբերական մրցույթի նախաորակավորման հայտարարության, 4) բացում եւ գնահատում է հայտերը, 5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին), 6) գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» կետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում եւ հայտարարում է ընտրված եւ հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

զ) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու եւ դրա հիման վրա կողմերի միջեւ համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչեւ համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում

է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71 ընթացակարգին Ընկերությունը մասնակցության հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ, 14 եւ 15-րդ չափաբաժիններով:

Գնահատող հանձնաժողովը որոշել է 1-ին, 14 և 15-րդ չափաբաժիններով հաղթող մասնակից ճանաչել Ընկերությանը ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերության պայմաններով, իսկ 2-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը նախահաշվային գինը գերազանցելու պատճառաբանությամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի հիմնավորմաբ ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Օրենքի մեջբերված դրույթի համաձայն՝ գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում, եթե՝ 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին, 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.

Ըստ էության Ընկերությունը թվով չորս չափաբաժիններով էլ ներկայացրել է այնպիսի գնային առաջարկ, որը գերազանցել է ընթացակարգով ներկայացված նախահաշվային գինը: Գնահատող հանձնաժողովը 1-ին, 14 և 15-րդ չափաբաժինների մասով կիառելի է դիտարկում Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը, սակայն առանց հիմնավորման այդ նույն կետը կիրառելի չի դիտարկում 2-րդ չափաբաժնի համար և արդյունքում մերժել է Ընկերության հայտը և ընթացակարգը համարել է չկայացած, հավանաբար նկատի ունենալով, որ 2-րդ չափաբաժնի մասով հայտը չի համապատսխանում հրավերի պայմաններին:

Վերը ներկայացրած նորմերի համատեքստում գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում ընթացակարգը օրենքին համապատասխան անցկացնելու համար: Եթե հանձնաժողովը Օրենքով և Կարգով լիազորված չէ որևէ գործառույթով ապա չի կարող գործել իր հարմարությունից ելնելով, այս դեպքում գնահատող հանձնաժողովը հայեցողական մոտեցում է դրսևորել, իսկ Օրենքով և Կարգով հայեցողական լիազորությամբ օժտված չէ, որ մի դեպքում նախահաշվային գնից բարձր գնային առաջարկը գնահատի ընդունելի, հրավերի պայմաններին համապատասխանող, իսկ մեկ այլ չափաբաժնի մասվ՝ ոչ:

Այսպիսով գնահատող հանձնաժողովը չունենալով իրավասություն՝ հայեցողական գնահատման է ենթարկել Ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով և առանց հիմնավորման հայտը մերժել է:

3. Բողոքի ընդունելության հիմնավորում.

Սույն բողոքը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը եւ հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը եւ առարկան.

4) վեճի առարկան եւ բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի եւ իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը: ….

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրենսդրի կողմից սահմանված վերոնշված պահնաջներն առկա են սույն բողոքում: Համաձայն նշված հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բողոքվ ներկայացված է վեճի առարկան և պահանջը:

Եթե բողոքով ներկայացված վեճի առարկայի եւ պահանջի միջև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դիտարկմամբ կան որոշակի անհստակություններ, ապա դա ամենեւին բողոքը վերադարձնելու հիմք չի կարող լինել, իսկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու հիմքեր «Գնումների մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում:

Ներկայացված բողոքի իրավական հիմքերի և ապացույցների լրացման, փոփոխման նպատակով բողոքաբերը սահմանափակված չէ և դրանք կարող է ներկայացնել նաև բողողոքի քննության ընթացքում, ինչ վերաբերում է բողոքի պահանջին և վեճի առարկային, ապա այդ առումով ևս բողոքաբերը սահմանափակված և կաշկանդված չէ լրացնելու և/կամ փոփոխելու, հսատկեցնելու բողոքի քննության ընթացքում, ընդհուպ մինչև բողոք քննող անձի կողմից որոշում կայացնելը: Պահանջի փոփոխման, լրացման կամ նոր ապացույցներ և իրավական հիմքեր ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է առաջանալ նաև՝ կապված Պատվիրատուի ներկայացրած դիրքորոշումից:

4. *Պահանջ.*

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել

1. դադարեցնել 06.08.2021թ թիվ 4-րդ արձանագրությամբ կայացված «Մեգիէլ» ՍՊ ընկերության հայտը 2-րդ չափաբաժնի մասով մերժելու և այդ չափաբաժնով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումները,

2. դադարեցնել 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր չկնքելու մասին որոշումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>2. «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.08.2021թ. թիվ 08-373 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 12.08.2021թ. ներկայացված բողոքի, հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է հետևյալը.

«Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:>>

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև՝ Կարգ)

-26-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն

«Գնահատող հանձնաժողովի՝

2) գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն երկու անդամ.

3) նիստն իրավազոր չլինելու դեպքում դրա մասին հայտնի դառնալու պահին քարտուղարը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը հետևյալ հաջորդականությամբ՝

ա. ոչ ավելի, քան երկու աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը,

բ. ապահովում է տվյալ անդամի ներկայանալը հանձնաժողովի նիստին կամ տվյալ անդամի փոխարեն, պատասխանատու ստորաբաժանման առաջարկության հիման վրա, նշանակում է հանձնաժողովի նոր անդամ,

գ. սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որը չպետք է ուշ լինի գնման ընթացակարգի կասեցման վերջնաժամկետից.»

- 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ պարբերության համաձայն.

«բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում

է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում»:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.18 կետի համաձայն

«Հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների»

Ընթացակարգի հայտերի բացման նիստը, որը պետք է տեղի ունենար 30.07.21թ-ին, հանձնաժողովի քարտուղարի բացակայությամբ պայմանավորված իրավազոր չլինելու պատճառով կասեցվել է և հայտերի բացման նիստ է նշանակվել 02.08.2021թ ժամը 12:00-ն (գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության և բժշկական կենտրոնի տնօրենի հրամանի պատճենները կցվում են): Նիստի կայացման ժամկետի տեղափոխման հետ կապված մասնակցին տեղեկացվել է հեռախոսաձանգով, այնուհետև իր խնդրանքին համապատասխան նաև էլեկտրոնային փոստի միջոցով: Ընկերությունը հայտերի բացման նիստի ապահովել է իր ներկայացուցչի ներկայությունը և տեղում ստացել բոլոր պահանջված տեղեկությունները: Մասնակիցների համար ապահովվել է թափանցիկությունը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է նմանատիպ իրավիճակների հետ կապված ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ առկա կարգավորումներով:

2-րդ չափաբաժնով Մասնակցի հայտը մերժելու, սակայն մեկ այլ չափաբաժիններով նախահաշվային գները գերազանցող առաջարկերը բավարար գնահատելու մասով անհրաժեշտ է շեշտել, որ Կարգի վերոնշյալ կետի կիրառման լիազորությունը ուղիղ իմասով վերապահված է գնահատող հանձնաժողովին, հետևաբար այն կարող է կիրառվել ինչպես նաև չկիրառվել միայն հանձնաժողովի կողմից: Ընդ որում հայտերի գնահատումը իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների, հետևաբար վերոհիշյալ դրույթի կիրառումը բոլոր չափաբաժինների համար պարտադիր կիրառելը հակասում է Օրենսդրությանը: Գնահատող հանձնաժողովը այդ որոշումը կայացնելիս բնականաբար հաշվի է առնում տվյալ չափաբաժնով նախատեսված ապրանքի կարևորությունը, ձեռքբերման ժամկետները, ինչպես նաև ֆինանսական առաջարկի ընդունելիության գործոնը: Այս ամենը մեկ ամբողջության մեջ վերցրած հանդիսանում է Պատվիրատուի իրավասություն, կենտրոնի բնականոն և անխափան գործունեությունն ապահովելու միջոց և որևէ մասնակից կամ հնարավոր մասնակից իրավունք չունի Պատվիրատուի փոխարեն նման հարցերում որոշումներ ընդունել:

Ելնելով վերը նշվածներից գտնում ենք, որ բողոքը հիմնավոր չէ, բողոքի պահանջը՝ ոչ իրավաչափ, և այն ենթակա է մերժման»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 18.08.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2021/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/65 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշել է Ընթացակարգի 1-ին 13 և 14-րդ չափաբաժնների մասով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերության պայմանները և արդյունքում՝ հիմք ընդունելով գնային առաջարկները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, իսկ 1, 14 և 15-րդ չափաբաժինների մասով որոշել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակագի գնահատող հանձնաժողովն Ընթացակարգը 2-6, 8-10, 17-20, 22-33, 37-39-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, «Նորք Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 16.08.2021թ. թիվ 08-373 գրությունը, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 14-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

Եվ այսպես, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/71» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.08.2021թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ հանձնաժողովը, ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոշել է Ընթացակարգի 1-ին 13 և 14-րդ չափաբաժնների մասով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերության պայմանները և արդյունքում՝ հիմք ընդունելով գնային առաջարկները, որոշել է մերժել «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, իսկ 1, 14 և 15-րդ չափաբաժինների մասով որոշել է «Մեգիէլ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակագի գնահատող հանձնաժողովը Ընթացակարգը 2-6, 8-10, 17-20, 22-33, 37-39-րդ չափաբաժինների մասով հայտարարել է չկայացած:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, այն է՝ վերջինս գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 1-ին, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով կիրառելի է դիտարկել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությունը, սակայն առանց հիմնավորման այդ նույն կետը կիրառելի չի դիտարկել 2-րդ չափաբաժնի համար և արդյունքում մերժել է Ընկերության հայտը և ընթացակարգը հայտարարել է չկայացած:

Վերը նշվածի մասով Պատվիրատուն բողոքի շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը այդ որոշումը կայացնելիս հաշվի է առել տվյալ չափաբաժնով նախատեսված ապրանքի կարևորությունը, ձեռքբերման ժամկետները, ինչպես նաև ֆինանսական առաջարկի ընդունելիության գործոնը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները, արձանագրում եմ հետևյալը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն Հավելված 2-ով՝ գնային առաջարկը, ներկայացրել է հետևյալ

տեսքով՝

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	2	3	4	5=3+4
1	ԱԱՇ Օքսիգենատոր մանկական	2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար)	0 (զրո)	2 600 000 (երկու միլիոն վեց հարյուր հազար)
2	ԱԱՇ Օքսիգենատոր մեծահասակի	2 000 000 (երկու միլիոն)	0 (զրո)	2 000 000 (երկու միլիոն)
14	Կարդիոտոնայի ռեզերվուար	600 000 (վեց հարյուր հազար)	0 (զրո)	600 000 (վեց հարյուր հազար)
15	Հակաանոգուլացիոն գիծ	150 000 (մեկ հարյուր հիսուն հազար)	0 (զրո)	150 000 (մեկ հարյուր հիսուն հազար)

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.08.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությանը կից ներկայացված հավելվածով Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալ նախահաշվային գները՝

1-ին չափաբաժին - 2 100 000

2-րդ չափաբաժին – 1 350 000

14-րդ չափաբաժին – 575 000

15-րդ չափաբաժին – 200 000

Հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլ նաև մասնակիցների՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց՝ նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու, ինչպես նաև չկայացած հայտարարելու պայմանները:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանվում է, որ ***<u>գնումը պատվիրատուի հատուցմամբ</u>՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքելու միջոցով բոլոր տեսակի ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումն է:***

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ***<u>Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝</u>***

1) <u>պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.</u>

2) <u>գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ</u>

<u>իրականացում:</u>

Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) և է) պարբերությունների համաձայն՝

Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա ***<u>մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է</u>*** բանակցությունների արդյունքում ***ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:*** Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև

համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ***եթե*** դրան ներկա ***մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:***

Վերը նշված իրավակարգավորումներից ելնելով՝ գտնում եմ, որ Պատվիրատուն Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.18-րդ ենթակետի համաձայն «Մեգիէլ» ՍՊԸ-ի հայտը ըստ առանձին չափաբաժինների գնահատելով և գնման կարիքի հրատապությունից ելնելով նախահաշվային գները գերազանցելու պայմաններում Ընթացակարգի 1-ին և 14-րդ չափաբաժինների մասով օգտվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությամբ նախատեսված իրեն վերապահված իրավունքից և ընտրված մասնակից ճանաչելով «Մեգիէլ» ՍՊԸ-ին, իսկ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով չկիրառելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությունը և մերժելով վերջինիս հայտը՝ արդյունքում Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա չկայացած հայտարարելով նշված չափաբաժինը, գործել է վերը նշված կարգավորումների պահպանմամբ, ուստի նման պայմաններում, գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 12.08.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**